# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 31.03.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
## թիվ 30/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Շին նախագիծ» ՍՊԸ-ի 13.03.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-30/17) և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ի լրումն բողոքի 20.03.2017թ. թիվ 03-17/030 գրությունը, ՀՀ Արարատի մարզպետարանի 16.03.2017թ. թիվ 2/3/1-2/1574-17 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ԳԲԽ-30/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 29.03.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **«Շին նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Շին նախագիծ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Հնաբերդ-Վ. Արտաշատ ճանապարհահատվածի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՀԾՁԲ-17/01» ծածկագրով առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 09.03.2016թ. թիվ 2 արձանագրությամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն):

Ընկերությունը հայտնել է, որ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված է եղել թերություններով, մասնավորապես, մրցույթի հրավերով սահմանված հավելված N 9-ին կից վճարման պահանջագրի վրա բացակայել է էլեկտրոնային ստորագրությունը և էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չի եղել գլխավոր հաշվապահի կողմից:

Ըստ Ընկերության՝ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 35-րդ կետի 9-րդ ենթակետը:

Ելնելով վերոգրյալից՝ «Շին նախագիծ» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու գործընթացը և չեղյալ համարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և հաղթող ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ընկերությունը, մասնակցելով 17.03.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-30/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է բողոքով ներկայացրած պահանջն ամբողջությամբ:

«Շին նախագիծ» ՍՊԸ-ն, ի լրումն ներկայացված բողոքի, 20.03.2017թ. թիվ 03-17/030 գրությամբ խնդրել է չեղյալ համարել Ընթացակարգի 13.03.2017թ. ՀՀ Արարատի մարզպետարանի և «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի միջև կնքված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՀԾՁԲ-17/01» ծածկագրով պայմանագիրը:

**<u>2. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Արարատի մարզպետարանը 16.03.2017թ. թիվ 2/3/1-2/1574-17 գրությամբ «Շին նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչված «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված N 9 հավելվածը համապատասխանում է Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.9 կետի պահանջներին, արդյունքում վերջինիս հետ կնքվել է պայմանագիր:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով 17.03.2017թ. ժամը 16:00-ին նշանակված ԳԲԽ-30/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

**3. ԳԲԽ-30/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 29.03.2017թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Շին նախագիծ» ՍՊԸ-ի 13.03.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, չեղյալ հայտարարել ՀՀ Արարատի մարզպետարանի և «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի միջև 13.03.2017թ. կնքված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՀԾՁԲ-17/01» ծածկագրով պայմանագիրը:

**4. ԳԲԽ-30/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲԽ-30/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից Հնաբերդ-Վ. Արտաշատ ճանապարհահատվածի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՀԾՁԲ-17/01» ծածկագրով առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն:
2. «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի հավելված N 9 տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրի վրա բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

**3.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.03.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պայմաններին համապատասխանող հայտ է ներկայացրել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն:

**4.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերը նշված արձանագրության 4-րդ կետով որոշել է 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին:

**5.** ՀՀ Արարատի մարզպետարանի և «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի միջև 13.03.2017թ. կնքվել է Հնաբերդ-Վ. Արտաշատ ճանապարհահատվածի հիմնանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՀԾՁԲ-17/01» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

**6.** 13.03.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքով «Շին նախագիծ» ՍՊԸ-ն խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու գործընթացը:

**7.** ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն՝ ի դեմս ԳԲԽ-30/17 բողոքը քննող հանձնաժողովի, 17.03.2017թ. կայացրած որոշմամբ, բավարարել է «Շին նախագիծ» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

**5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը**

Խորհուրդը քննելով «Շին նախագիծ» ՍՊԸ-ի 13.03.2017թ. ներկայացրած բողոքը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերում, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտ ներկայացնելիս՝

***փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ,*** իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. N 667-Ն հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերի 9-րդ հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնության և դրան կից՝ ***վճարման պահանջագրի*** ձևով:

«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ի 18.ա. կետի համաձայն՝ «վճարողի ստորագրությունը» վավերապայմանի առկայությունը և լրացման պահանջը **պարտադիր է**:

Ընկերությունը ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի որպես ընտրված մասնակից «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված է եղել թերություններով, մասնավորապես, հավելված N 9-ին կից վճարման պահանջագրի վրա բացակայել է էլեկտրոնային ստորագրությունը և էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չի եղել գլխավոր հաշվապահի կողմից:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը, պարզել է, որ այն հաստատված չի եղել Կազմակերպության կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Խորհուրդը գտնում է, որ տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագիրը լրացվում է վերը նշված օրինակելի ձևերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի համապատասխան և գնահատվում է հրավերի պահանջներին համապատասխանող, երբ դրա՝ որպես պարտադիր նշված դաշտերը լրացված են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.03.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրությամբ, հիմք ընդունելով, որ Կազմակերպությունը ներկայացրել է Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պայմաններին համապատասխանող հայտ, որոշել է 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին, որի արդյունքում ՀՀ Արարատի մարզպետարանի և «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի միջև 13.03.2017թ. կնքվել է Պայմանագիր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը հայտնում է, որ Պատվիրատուն Կազմակերպության կողմից Ընթացակարգին մասնակցության հայտը գնահատելով բավարար, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, քանի որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող **մասնակցի *հայտը կազմող յուրաքանչյուր փաստաթուղթ* հաստատվում է դրանք ներկայացնող անձի կամ վերջինիս լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ,** մինչդեռ «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի հավելված N 9 տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագիրը ներկայացվել է ***առանց էլեկտրոնային թվային ստորագրության հաստատման:***

Ինչ վերաբերում է «Շին նախագիծ» ՍՊԸ-ի բողոքով հայտնած այն դիրքորոշմանը, որ վերը նշված վճարման պահանջագիրն էլեկտրոնային ստորագրությամբ պետք է հաստատված լիներ նաև գլխավոր հաշվապահի կողմից, ապա այս կապակցությամբ

Խորհուրդը հայտնում է, որ վճարման պահանջագրի օրինակելի ձևում **որպես պարտադիր պահանջ**, սահմանվել է, որ նշված փաստաթուղթը ստորագրվում է **վճարողի կողմից,** իսկ գլխավոր հաշվապահի ստորագրության պահանջը չի կարող դիտարկվել որպես պարտադիր պայման նշված փաստաթղթի համար:

Այսպիսով, «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը չլրացնելով, խախտել է Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետը, ուստի վերջինիս կողմից ներկայացված վճարման պահանջագիրը համարվում է Ընթացակարգի հրավերով սահմանված ***«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ով սահմանված դրույթներին անհամապատասխան:***

Պատվիրատուն 16.03.2017թ. թիվ 2/3/1-2/1574-17 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչված «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի և ՀՀ Արարատի մարզպետարանի միջև սահմանված կարգով 13.03.2017թ. կնքվել է պայմանագիր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ *օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է,* եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Խորհուրդը հայտնում է, որ Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ բողոքն ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, ***սակայն մինչև խորհրդի կողմից նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որոշման ընդունումը <u>պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու</u>, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող <u>գործարքը համարվում է անվավեր:</u>***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***խորհուրդն իրավունք ունի չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը*** Օրենքի 9-րդ հոդվածի կամ ***49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում***, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն

իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

Ընկերությունը ***13.03.2017թ.*** ներկայացրած բողոքով, հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջը, միջնորդություն է ներկայացրել պայմանագրի կնքման գործընթացը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին, ինչը բավարարվել է Խորհրդի որոշմամբ: Հետևաբար, Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, Պատվիրատուն իրավունք չուներ կնքելու պայմանագիր, ուստի ՀՀ Արարատի մարզպետարանի և «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի միջև 13.03.2017թ. կնքված Պայմանագիրը (մինչև միջնորդության կապակցությամբ որոշում կայացնելը) կնքվել է Օրենքի պահանջների խախտմամբ, իսկ նման պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն, անվավեր է և Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ենթակա է չեղյալ հայտարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Շին նախագիծ» ՍՊԸ-ի 13.03.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել.

1. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Չեղյալ հայտարարել ՀՀ Արարատի մարզպետարանի և «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի միջև 13.03.2017թ. կնքված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՀԾՁԲ-17/01» ծածկագրով պայմանագիրը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Բողոքը քննող հանձնաժողով՝**

**Նախագահ՝** **Ոսկանյան Լուսինե**

**Անդամ՝** **Ավետիսյան Հրաչյա**